


---

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ. Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 122 էջ:



Վերջերս լույս տեսավ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Արևշատյանի «Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ» աշխատությունը: X–XI դարերի խոշորագույն քաղաքական և ռազմական գործիչ, գիտնական, փիլիսոփա, գեղագետ, բանաստեղծ-երաժիշտ ու մանկավարժ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու գործունեությունը Անիի Բագրատունյաց թագավորության շրջանի գիտական ու մշակութային հզոր վերելքի ցայտուն արտահայտություններից է: Այս ականավոր հեղինակի գրական ժառանգությունը հայագիտական ուսումնասիրությունների նյութ է դարձել դեռևս XX դարի սկզբից. թեմային անդրադարձել են, մասնավորապես, Կ. Կոստանյանցը, Ն. Ադոնցը, Մ. Աբեղյանը, Ա. Ադամյանը, Ս. Արևշատյանը, Լ. Խաչերյանը, Հ. Բարթիկյանը, Գ. Մուրադյանը և այլք: Վաղուց ի վեր, սակայն, հասունացել էր հայ միջնադարյան երաժշտական մշակույթի զարգացման գործում Գրիգոր Մագիստրոսի ունեցած ավանդն արժևորելու, նրա երաժշտաբանաստեղծական արվեստի և երաժշտական գեղագիտության համակողմանի լուսաբանմանը նվիրված առանձին մենագրություն ստեղծելու անհրաժեշտությունը: Այս կարևոր բացը լրացնում է գրախոսվող աշխատությունը, որտեղ առաջին անգամ անդրադարձ է կատարվում Գրիգոր Մագիստրոսի երաժշտական ժառանգությանը և երաժշտագեղագիտական հայացքներին: Նշված խնդիրները Ա. Արևշատյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են գտնվել դեռևս 1990-ականների վերջերից: Թեմային առնչվող առանձին հարցեր լուսաբանվել են հեղինակի՝ տարբեր տարիներին լույս տեսած մի շարք հոդվածներում: Ներկա աշխատության ստեղծման անմիջական նախափուլը կարելի է համարել Ա. Արևշատյանի «Անիի երաժշտական մշակույթը» մենագրությունը (2014), որի գլուխներից երկուսը նվիրված են Գրիգոր Մագիստրոսի երաժշտաբանաստեղծական արվեստին և գեղագիտական հայացքներին: Այսպիսով՝ ներկայացվող ուսումնասիրությունն այս ասպարե-

գում վաստակաշատ միջնադարագետի բազմամյա հետազոտության ընդհանրացումն ու ամփոփումն է:

Ինչպես ընդգծում է Ա. Արևշատյանը գրքի Առաջաբանում, Գրիգոր Մագիստրոսի ֆենոմենը «(...) եզակի է ոչ միայն հայ իրականության, այլ նաև Մերձավոր Արևելքի և Արևմտյան Եվրոպայի միջնադարյան մշակույթների X–XI դարերի պատմության մեջ», ուստի սույն մենագրությունը ստեղծելիս հեղինակի նպատակն է եղել «հնարավորինս համապարփակ ձևով լուսարանել Գրիգոր Մագիստրոսի վաստակն ու ավանդը հայ միջնադարյան երաժշտական մշակույթի զարգացման մեջ, առաջին հերթին իբրև երգահան հեղինակ՝ շարականագիր և տաղասաց, ինչպես նաև՝ իբրև երաժշտության կարկառուն գեղագետ և գիտակ» (էջ 11–12):

Գրքի առաջին գլուխը ներառում է Գրիգոր Մագիստրոսի կենսագրական տեղեկությունները և նրա գործունեության տարբեր ոլորտների բնութագրերը: Պատմագրական, գրականագիտական և հարակից այլ աղբյուրների լայն ընդգրկումով բնորոշվող շարադրանքում ընթերցողի առջև է հանում Պալատիկների նշանավոր իշխանական տոհմից սերող այս հանրագիտակ մտավորականի, նրբաճաշակ արվեստագետի և հայրենանվեր քաղաքական ու ռազմական գործչի վառ կերպարը: Իր փիլիսոփայական և գեղագիտական հայացքներով, գիտական հետաքրքրությունների բացառիկ լայն շրջանակով, կրթական գործի կազմակերպման նոր մոտեցումներով ու բանաստեղծական արվեստի ոլորտում կատարած նորամուծություններով Գրիգոր Մագիստրոս Պալատիկունին հանդես է գալիս որպես Հայկական Վերածնության դարաշրջանի տիպական ներկայացուցիչ:

Աշխատության երկրորդ գլխի բովանդակության առանցքն է կազմում Գրիգոր Մագիստրոսի երաժշտական ժառանգությունը, որը ներկայացված է շարականներով և երկու տաղով (վերջիններիս երաժշտական բաղադրիչը չի պահպանվել): Միջնադարյան ձեռագիր աղբյուրներում և XIX–XX դարերի հայ շարականագիտության մեջ առկա մի շարք տվյալների մանրագնին դիտարկման, ինչպես նաև Գրիգոր Մագիստրոսին վերագրվող շարականների բանաստեղծական և երաժշտական բաղադրիչների համակողմանի քննության արդյունքում Ա. Արևշատյանը ոչ միայն հստակեցնում է Գրիգոր Մագիստրոսի շարականային ժառանգությանն առնչվող որոշ վիճահարույց հարցեր, այլև ճշգրտում է նրան պատկանող շարականների ցանկը՝ հասցնելով դրանց թիվն առնվազն հինգի:

Հեղինակը նախ համոզիչ փաստարկներով հիմնավորում է Խաչի վերացման Ե օրվա «Ձորս ըստ պատկերի Քուս» Գձ Ողորմյա շարականի պատկանելությունը Գրիգոր Մագիստրոսին (հայ շարականագիտության մեջ շրջա-

նառու մեկ այլ կարծիքի համաձայն՝ նույն շարականը վերագրվում է VII դարի իշխան Աշոտ Պատրիկ Բագրատունուն, ինչը Ա. Արևշատյանը համարում է միջնադարյան որոշ պատմագրական աղբյուրներում առկա անճշտության և խառնաշփոթի հետևանք): Բացի դրանից, մատենագրական որոշ նորահայտ տվյալների հիման վրա հեղինակը Գրիգոր Մագիստրոսի գրչի արգասիքն է համարում նաև Խաչի վերացման Ե օրվա կարգի մյուս բոլոր բաղկացուցիչ մասերը՝ բացառությամբ «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» Օրհնության շարականի, որը վերագրվում է VII–VIII դարերի կաթողիկոս Մահակ Չորափորեցուն: Իր տեսակետը Ա. Արևշատյանը հիմնավորում է նաև վերոնշյալ շարականների երաժշտական բաղադրիչի վերլուծության արդյունքներով՝ նկատի ունենալով դրանց ձայնեղանակային հիմքի նույնությունը (ԳՃ-ի և ԳՃ դարձվածքի համադրություն) և էլևեջային նկարագրի հարազատությունը: Գրիգոր Մագիստրոսի երաժշտաբանաստեղծական ժառանգության համակողմանի քննության արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ «Շարակնոցում տեղ գտած և եկեղեցու կողմից կանոնակարգված նրա հինգ շարականները (...) հավաստում են Մագիստրոսի ազգային շարականերգության նախորդող շրջանների հիանալի իմացությունը, ինչպես աստվածաբանության, այնպես էլ աստվածաշնչական պոետիկայի, գուտ բանաստեղծական, տաղաչափական հնարանքների և եկեղեցական երգարվեստի տեսական և գործնական ոլորտներին հմուտ տիրապետման առումով» (էջ 67):

Գրքի երրորդ և չորրորդ գլուխներում լուսաբանվում են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու՝ երաժշտական արվեստի տարաբնույթ կողմերին առնչվող հայացքներն ու մոտեցումները, որոնք շարադրված են ականավոր գիտնականի «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ և նրա «Թղթերում» (նամակներում): Այսպիսով զգալի չափով լրացվում է Գրիգոր Մագիստրոսի գեղագիտական հայացքների ուսումնասիրության ոլորտում մինչև վերջերս առկա բացը: Աշխատության այս հատվածի գիտական արժեքն առավել նշանակալի են դարձնում «Մեկնութիւն քերականին» երկի և նամակների բնագրերից արված ծավալուն մեջբերումները՝ զուգահեռ աշխարհաբար թարգմանությամբ (երբեմն նաև ռուսերեն թարգմանության ներգրավմամբ), որը մի շարք դեպքերում Ա. Արևշատյանի կողմից ենթակվել է կարևոր ճշգրտումների, ուղղումների և լրացումների՝ բնագրին առավելագույնս հարազատ մնալու միտումով:

Հայտնի է, որ Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը» լուրջ դժվարություններ են հարուցում թարգմանության համար: Ինչպես նշում է Ա. Արևշատյանը, Մագիստրոսի «լեզուն և ոճը բարդ են, խրթին, հաճախ պաճուճագարդ» (էջ 71): Ավելացնենք, որ այն լի է հունարանություններով, հաճախ դժվար վերծանելի

դարձվածքներով ու երբեմն պարզապես անհասկանալի բառերով: Այդ է պատճառը, որ Մագիստրոսի նամակների պես հարստագույն մատենագրական հուշարձանն առ այսօր չի թարգմանվել անգամ աշխարհաբարի: Տարբեր տարիներին Նամականիի փիլիսոփայական և եկեղեցական-դավանաբանական բովանդակության առանձին միավորներ աշխարհաբար և ռուսերեն լեզուներով թարգմանել են ակադեմիկոսներ Հրաչ Բարթիկյանը և Սեն Արևշատյանը: Ներկայումս Նամականիի ամբողջական անգլերեն թարգմանությունը հրատարակության է պատրաստում Օքսֆորդի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ՝ հայտնի հայագետ Թեո Մարտին վան Լինտը: Այս առումով նույնպես Ա. Արևշատյանի անդրադարձը Գրիգոր Մագիստրոսի երաժշտագեղագիտական հայացքներին և Նամականիում տեղ գտած երաժշտական այլևայլ երևույթներին ու փաստերին ուշագրավ է և արժանի դրվատանքի:

Ընդգրկուն և բազմաբովանդակ է «Մեկնություն քերականին» երկում և «Թղթերում» արծարծվող հարցերի շրջանակը, որը փաստում է Գրիգոր Մագիստրոսի քաջատեղյակությունը թե՛ նախորդ շրջանների, թե՛ իրեն ժամանակակից երաժշտական արվեստին: Գիտնականի հետաքրքրությունների ծիրում գտնվող կարևոր խնդիրներից է, մասնավորապես, Անիի թագավորության շրջանի գուսանական արվեստը և վերջինիս կենտրոնական ժանրային դրսևորումներից մեկը՝ հագներգությունը (ռապսոդիան), որի կառուցվածքային սկզբունքների մասին նա խիստ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում: Գրիգոր Մագիստրոսի գեղագիտական հայացքներն առավել ամբողջականորեն արտացոլված են նրա նամակներում, որոնք ուղղված են հայ և օտարազգի քաղաքական գործիչների, հոգևոր ու աշխարհիկ դասի բարձրաստիճան ներկայացուցիչների: Ա. Արևշատյանի կարծիքով՝ Մագիստրոսի գեղագիտական սկզբունքների ձևավորման վրա (մասնավորապես՝ բնության և մարդու ընկալումների տեսանկյունից) որոշակի ազդեցություն են ունեցել հատկապես անտիկ փիլիսոփայության սյուները (Պլատոն, Արիստոտել) և կապադովկյան հայրերը (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի): Տարբեր հասցեատերերին ուղղված նամակները բովանդակում են Գրիգոր Մագիստրոսի կարծիքները, դիտարկումներն ու դիտողությունները իրեն ժամանակակից հոգևոր և աշխարհիկ երաժշտության դրսևորումների, երաժշտական կյանքի ու կենցաղի տարբեր իրողությունների վերաբերյալ: Այս առումով Մագիստրոսի արտահայտած կարծիքներն ու գնահատականները, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Արևշատյանը, «(...) ընկալվում են իբրև այդ ժամանակաշրջանի գեղարվեստական-մշակութային կյանքի անցուդարձի կենդանի վկայություններ» (էջ 80): Խիստ ուշագրավ է, մասնավորապես, X–XI դարե-

րում թաղման արարողությունների ժամանակ հեթանոսական ծեսերի վերապրուկային տարրերի առկայության մասին տեղեկությունը կամ Անիի պալատական միջավայրում ներքինիների (կաստրատների) երգեցողության ավանդույթի հիշատակումը: Այս ավանդույթը, ինչպես նկատում է Ա. Արևշատյանը, փոխառվել էր բյուզանդական հոգևոր մշակույթից և արևելաքրիստոնեական միջավայրի գեղագիտական ընկալումներին բնորոշ՝ կալոֆոնիկ (գեղեցկաձայն, հրեշտակաձայն) կոչված երգեցողության ոճի արտացոլումն էր:

Գիրքը համալրված է նոտային օրինակներով, Գրիգոր Մագիստրոսի դիմանկարը պատկերող եզակի մանրանկարով, Անիի Մայր տաճարի և Գրիգոր Մագիստրոսի կառուցած եկեղեցիների լուսանկարներով:

Աշխատության ակնառու գիտական արժեքը շահեկանորեն լրացնում են ռուսերեն և անգլերեն ամփոփումները:

Հայագիտության և, մասնավորապես, հայ երաժշտական միջնադարագիտության ասպարեզում ձևավորվել է մեր միջնադարի նշանավոր գործիչներին նվիրված մենագրությունների ստեղծման ավանդույթը, ինչը թույլ է տալիս համապարփակ ձևով քննելու նրանց բազմակողմանի գործունեությունը, վերհանելու այդ գործունեության դեռևս քիչ հայտնի կամ անհայտ էջերը: Այդ առումով կարելի է նշել, օրինակ, վաստակաշատ երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանի «Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ» (1973) և «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դարերում» (1985) մեծարժեք աշխատությունները: Սակայն մեր մյուս խոշոր գիտնական-շարականագիրները, ինչպես, օրինակ, Ստեփանոս Սյունեցին, Հովհաննես Երզնկացի Պլուզը, Վարդան Արևելցին և ուրիշները դեռ սպասում են իրենց երաժշտական ստեղծագործության համակողմանի և խորացված լուսաբանմանը: Այդ առումով Ա. Արևշատյանի «Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ» ուսումնասիրության հրատարակումը կարևոր համալրում է հայ արդի երաժշտական միջնադարագիտության նշանակալի ձեռքբերումների շարքում: